

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1993 թ. մայիսի 1—4 օրերին, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով, Քենթրբերիի Արքեպիսկոպոս Նորին Գերաշնորհություն Դոկտ. Ջորջ Քերին պաշտոնական այցով ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որպես Նորին Սրբության հարգարժան հյուրը:

Քենթրբերիի Արքեպիսկոպոսի շքախմբին մաս էին կազմում Օքսֆորդի Եպիսկոպոս Գերաշնորհ Տ. Ռիչարդ Հերիսը և Անգլիկան Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ:

Այս առթիվ Մայր Աթոռ էին հրավիրվել Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Գազանճյանը և Հայ Եկեղեցու հինգ թեմական առաջնորդներ արտերկրից և ութ եպիսկոպոսներ՝ Հայաստանից:

Մայիսի 1-ին, շաբաթ օրը, երեկոյան, Ս. Էջմիածնի Վեհարանում Հայոց Հայրապետը ջերմորեն ողջունեց Անգլիկան Եկեղեցու հոգևոր պետին և բարի գալուստ մաղթեց նրան:

Հետևյալ օրը, կիրակի առավոտյան, երկու քույր Եկեղեցիների պետերը Մայր տաճարում ներկա գտնվեցին Սուրբ Պատարագի արարողությանը, որի ընթացքում Նորին Սրբության և Քենթրբերիի Արքեպիսկոպոսի միջև փոխանակվեցին ողջույնի խոսքեր:

Նույն օրը Անգլիկան Եկեղեցու պատվիրակությունը, ընդառաջելով Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոսի հրավերին, մեկնեց Գյումրի, որտեղ ներկա եղավ Լորդ Բայրոնի անվան անգլիական թեքումով միջնակարգ դպրոցում կազմակերպված հանդիսությանը: Ապա Արքեպիսկոպոսը հանդիպում ունեցավ քաղաքապետի, թեմական խորհրդի անդամների, ուսանողների և հավատացյալ ժողովրդի հետ: Օրվա վերջում Արքեպիսկոպոսը այցելեց տեղի Ս. Աստվածածին եկեղեցի, որտեղ տեղի ունեցավ համատեղ աղոթք:

Մայիսի 3-ին, առավոտյան, Վեհարանում Անգլիկան և Հայ Եկեղեցու ներկայացուցիչների միջև, գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի և Քենթրբերիի Արքեպիսկոպոսի, տեղի ունեցավ խորհրդակցություն՝ երկու Եկեղեցիները շահագրգռող այժմեական հարցերի շուրջ, և այնուհետև, ժամը 12-ին, ՀՀ նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը նախագահական պալատում ընդունեց երկու Եկեղեցիների պետերին՝ իրենց շքախմբերով: Այստեղ տեղի ունեցավ մեկ ժամ տևող շահեկան զրույց նախագահի, Նորին Սրբության և Քենթրբերիի Արքեպիսկոպոսի միջև: Ապա Անգլիկան Եկեղեցու պատվիրակությունը Վեհափառ Հայրապետի և Հայ Եկեղեցու հոգևոր դասի

ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՆՈՐԻՆ ԳԵՐԱՇՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ ԴՈԿՏ. ՋՈՐՋ ՔԵՐԻ

ընկերակցությամբ մեկնեց Ծիծեռնակաբերդ, ուր տեղի ունեցավ ծաղկեպսակի զետեղում հայ նահատակաց հուշարձանին և համատեղ հոգեհանգստյան աղոթք:

Ժամը 14-ին Մայր Աթոռի հյուրերն այցելեցին Ս. Գեղարդի վանք: Նույն օրը, երեկոյան, Հայֆիլհարմոնիայի դահլիճում հյուրերի պատվին կազմակերպվեց համերգ՝ Հոգեշնորհ Տ. Մամիկոն աբեղայի (երգեհոն) և Արարատյան թեմի Ս. Սարգիս մանկական երկձայն երգչախմբի կատարմամբ: Երեկոյան, ի պատիվ Քենթրբերիի Արքեպիսկոպոսի և նրա շքախմբի անդամների, Վեհարանում տրվեց ողջերթի ճաշկերույթ:

Մայիսի 4-ին, երեքշաբթի օրը, առավոտյան, Վեհարանում քույր Եկեղեցիների պետերը ստորագրեցին համատեղ մի հաղորդագրություն: Ապա հյուրերը այցելեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան և Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի: Այստեղ նրանց բարիգալստյան խոսք ասաց առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոսը: Նույն օրը, հետմիջօրեի, Անգլիկան Եկեղեցու պատվիրակությունը մեկնեց Թբիլիսի:

Քենթրբերիի նորընտիր Արքեպիսկոպոսի սույն այցելությամբ առավել ամրապնդվեցին Հայ և Անգլիկան Եկեղեցիների պատմական կապերը՝ նոր հեռանկարներ բացելով ապագա եղբայրական գործակցության:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
10 մայիսի 1993 թ.